րում էլ՝ էլեկտրական լամպը, որը կախվել է ոչ միայն պատուհանավոր սենյակներում, այլև **ճացատօճէրի** և **ֆըրատակճէրի** մեջ։ Էներգիան ստացվում է Սիսիանում՝ Շաքիի հիդրոկայանից, իսկ Գորիսի շրջանում՝ Գորիսի էլեկտրակայանից։ Շուտով էլեկտրական էներգիա կստանան բոլոր գյուղերը ոչ միայն լուսավորության, այլև գյուղատնտեսական աշխատանքների շարժիչ ուժի համար։

Անցյալում տան անհրաժեշտ կահավորումն էր **ճռիֆüգը**՝[21] շարժական, աճագին, երկար ու բարձր փայտե քառանկյուն **ամբարը**, որի վերին երեսի տախտակները քանդովի են՝ հացահատիկ՝ ցորեն և ալյուր մեջը լցնելու համար։ Ավելի աղքատ ընտանիքները **ճռիֆüգի** փոխարեն շինել են կավից կամ հյուսել են ճյուղերից ու կուռվ ծեփել մի **ֆբօցի** նման բան, որ կոչվում է **ֆռիճդուկ**։ Միջնորմով **ճռիֆüգը** բաժանված է երկու, երբեմն ավելի, մասերի, մեկը՝ հատիկի, մյուսն՝ ալյուրի համար։ Յուրաքանչյուր մասն իր առջևից ստորին մասում ունի մի դռնակ, որի տախտակափեղկը՝ **ղափաղը**, քաշվում է վեր և հատիկը կամ ալյուրը թափվում է դուրս։ Այսպիսի մի **ամբարը** տանում է 1—1,5 կամ ավելի, տոննա ցորեն և ալյուր։ **Ամբարի** վրա դարսվում են ամաններ, մանր իրեր և գործիքներ, երբեմն անկողին՝ **չէչիմավ** կամ **փալասավ** ծածկված։ Սակայն վերջին նպատակին հատկացվում է կամ առանձին փայտե տախտ, որի տակ անկարգ հավաքվում են տանու մանր-մունր իրերն և դատարկ ամանները, կամ պատի մեջ թողած լայն **պատռճանը՝ ծըլֆառէղին**։ Մանր **պատռճանճէրը՝ ակճառճէր** Սիսիանում, անդուռ կամ դռնով՝ **դօլաբճէրը** թողված են բոլոր պատերի մեջ ոչ միայն ամանների, այլև շորերի համար, որոնք կապված են լինում **բօխչաճէրի** մեջ, սակայն շորերի համար յուրաքանչյուր հարս իր օժիտի հետ բերած է լինում իր սնդուկը՝ փայտից շինված, ներկված և թիթեղի գույնզգույն կտորներով պատված։

Ամբարի տեղը սովորաբար այն պատի տակն է, որն այնքան էլ խոնավ չի լինում։ Նրա կողքին դրվում է թխած հացի **սաճդուխը**։ Մի ավելի լուսավոր անկյունում առաստաղի մեջ երբեմն հատուկ բացված **յէրթիկ, ճռirթ** են թողնում, այդտեղ կանգնեցվում է **ճլկաֆօրը**՝ ջուլհակության դազգահը կտավ և շալ գործելու համար։ Այն հաստատված է հատակի մեջ փորած **ճօրի** մեջ, ուր իջեցնում է իր ոտները բանողը։ Մի այլ տեղ պատին կամ սյունին դեմ է տրված գորգագործի **ճալֆը**, որը սովորաբար ավելի լավ լուսավորություն ունենալու համար գերադասում են կանգնեցնել **սըճառում**, քանի որ այդ տնայնագործական աշխատանքով ավելի զբաղվում են տաք ամիսներին։ **Հալֆի** կողքին շարված են հարկավոր մանր գործիքները։ **Պճռառը՝ ճախարակը, չաճռաճ** կանգնեցվում է այնտեղ, որտեղից հարկ եղած ժամանակ կարելի է նրան ձեռաց վերցնել։

Զանգեզուրցի հայի տունը բավականին հարուստ է **ամաճեղեճով**, մանավանդ, որ կավեղենը տան կանայք իրենք են շինում կամ շինել են տալիս իր հարևան վարժ կնոջը։ Յուրաքանչյուր գյուղում գտնվում էր իր հմտությամբ աչքի ընկնող կավագործ կին։ Սակայն ավելի պարծենում են պղնձե ամաններով, թեև նրանց մեջ կերակուրը երկար չեն պահում։ Առանձին պարծանքի առարկա է պղնձե **գռիգռիմը**՝ ջրի մեծ կուժը։ Զանգեզուրում չեն պատահում Լոռու համար

---

[21] Հմմտ. Мелик-Шахназаров Е., Село Арцваник, СМОМПК, вып. XXV, отд. II, էջ 16։